ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԾՁԲ-20-4/3-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 13.03.2020թ. կնքված № ԲՄԾՁԲ-20-4/3-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների և պահեստամասերի միավորի գները սահմանված են Պայմանագրով:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն Կատարած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 1 էջից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 22փ.բն. 30
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/հ 900011144079	Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00465342
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԾՁԲ-20-4/3-5 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

Ծառայությունների գնման ժամանակացույց

Ծառայության							
Հ/Հ	Չ/հ	անվանումը	Չ/մ	Քանակը	Կատարողին վճարվող գումարի գործակից	Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Մատուցման ժամանակացույց
1	28	ՎԱԶ-2112	դրամ	1	0.839	300000	Ծառայությունների մատուցումը 2020թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ: Ըստ ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության հայտերի:
2	29	ՎԱԶ-21144-110-32	դրամ	1	0.839	300000	

Հավելված N 2
N ԲՄԾՁԲ-20-4/3-5 պայմանագրին կից 1 Համաձայնագրի

Ծառայությունների վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Հ/Հ	Չ/հ	CPV կոդ	Ծառայության անվանումը	Չ/մ	Քանակը	Վճարումը կիրականացվի 2020թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝								
						ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20.12.20թ
1	28	50111130/518	ՎԱԶ-2112	դրամ	1	100000	100000	100000	200000	200000	200000	300000	300000	300000
2	29	50111130/519	ՎԱԶ-21144-110-32	դրամ	1	100000	100000	100000	200000	200000	200000	300000	300000	300000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ տնօրեն

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ